

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ. հունիսի 17-ին կայացած թիվ 12 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 31-ը:

Օրակարգում՝

1. Մրցույթ:
2. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
3. Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը:
4. ԵՊՀ ինտրանետ համակարգում դասախոսությունների տեղադրման հարցը:
5. Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ գենետիկայի և բջջաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոններում 1 դրույքաչափով ամբիոնների վարիչների պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուների մասին (կից ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. գրանցել գենետիկայի և բջջաբանության ամբիոնի գործող վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռուբեն Միքայելի Հարությունյանին, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.թ., դոցենտ Աննա Ֆելիքսի Կարապետյանին, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.թ., դոցենտ Նելլի Ալեքսանդրի Հովհաննիսյանին փակ (գաղտնի) քվեարկության ցուցակում՝ ամբիոնի վարիչի պաշտոնում (1 դրույքաչափ) ընտրվելու համար:

2. ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նախագահ՝ կ.գ.թ., դեկանի տեղակալ Հ.Հ. Սեմերջյան, անդամներ՝ Է.Մ. Եղիազարյան, Ի.Վ. Շահազիզյան, Հ.Վ. Վարդումյան:

ԼՍԵՑԻՆ՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ կ.գ.թ. Հ.Հ. Սեմերջյանի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. հաստատել փակ (զաղտնի) քվեարկության արդյունքները՝ խորհրդի 41 անդամներից քվեարկությանը մասնակցել են 31 հոգի:

2. քվեարկությանը մասնակցած 31 անդամներից՝ Ռուբեն Միքայելի Հարությունյանին կողմ քվեարկել են 28-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ 3: Ռուբեն Միքայելի Հարությունյանին համարել ընտրված գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի (1 դրույքաչափ) պաշտոնում:

Քվեարկությանը մասնակցած 31 անդամներից՝ Աննա Ֆելիքսի Կարապետյանին կողմ քվեարկել են 31-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա: Աննա Ֆելիքսի Կարապետյանին համարել ընտրված մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի (1 դրույքաչափ) պաշտոնում:

Քվեարկությանը մասնակցած 31 անդամներից՝ Նելլի Ալեքսանդրի Հովհաննիսյանին կողմ քվեարկել են 29-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ 2: Նելլի Ալեքսանդրի Հովհաննիսյանին համարել ընտրված էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի (1 դրույքաչափ) պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյանի «Հայաստանի Հանրապետության էկոլոգիապես ռիսկային որոշ տարածքների հողերի վիճակի գնահատումը և բարելավման ուղիները» դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը: Կ. Ղազարյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ատենախոսության թեմայի հիմնական դրույթների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ կ.գ.թ. դոցենտ Ն.Ա. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝ հաստատել Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Ղազարյանի՝ «Հայաստանի Հանրապետության Էկոլոգիապես ռիսկային որոշ տարածքների հողերի վիճակի գնահատումը և բարելավման ուղիները» դոկտորական ատենախոսության թեման:

3. Լսեցին՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտներ՝ Նարինե Կոլյայի Հայրապետյանին և Հասմիկ Մաենլեստի Կարապետյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ֆ.Դ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտներ՝ Նարինե Կոլյայի Հայրապետյանին և Հասմիկ Մաենլեստի Կարապետյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ինտրանետ համակարգում դասախոսությունների տեղադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել ԵՊՀ ինտրանետ համակարգում կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ Մարգարիտ Թորգոմի Պետրոսյանի «Բույսերի աճի և զարգացման ֆիզիոլոգիա» առարկայի դասախոսությունների տեղադրումը:

Երաշխավորել ԵՊՀ ինտրանետ համակարգում կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ապիստենտ, «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող Նաիրա Ժորայի Սահակյանի «Բույսերի կենսատեխնոլոգիական մեթոդներ» առարկայի դասախոսությունների տեղադրումը:

5. ԼՍԵՑԻՆ՝ ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է. Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել հրատարակման կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացրած կ.գ.դ., պրոֆեսոր Հասմիկ Գուրգենի Վահրադյանի «Biochemistry» (անգլերեն) ուսումնական ձեռնարկը:

6. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին մասնակցելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյանը:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել հայտ ներկայացրած կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հովիկ Հարությունի Փանոսյանի «Հայաստանի էքստրեմալ միջավայրերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէները էկզոպոլիսախարիդների ստացման աղբյուր. Էկզոպոլիսախարիդների քիմիական

կառուցվածքն ու սինթեզն ապահովող գեները» նախագիծը մրցույթին մասնակցելու համար:

Երաշխավորել հայտ ներկայացրած կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Նաիրա Ժորայի Սահակյանի «Այլանտոնի ազդեցությունը կրծքագեղձի քաղցկեղային բջիջների աճի և նյութափոխանակության կարգավորման վրա» նախագիծը մրցույթին մասնակցելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝


ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է. Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան

